«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Ք. Մասիս հ. 3 հիմն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 4

ԳԼՈՒԽ 1

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱԿ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ. 6

ԳԼՈՒԽ 2

ԱՌԱԿԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ. 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեությունն աշխարհում ամենատարածված կրոնն է: Քրիստոնեության հիմնական գաղափարները ձևավորվել են սրանից մոտավորապես 2000 տարի առաջ և վերագրվում են Քրիստոսին:

Քրիստոնյաները հավատում են մեկ՝ ամենազոր ու ամենակարող Աստծու գոյությանը, իսկ Քրիստոսին համարում են նրա որդին: Նրանք գտնում են, որ մարդու մահից հետո կյանք կա և այն էլ ՝ հավերժական: Քրիստոնեությունը մարդասիրական կրոն է. այն քարոզում է կարեկցանք և սեր, կոչ է անում փոխօգնության: Քրիստոսը երկիր է ուղարկվել մեղավոր մարդկության մեղքերն իր տառապալից մահով քավելու և մարդկանց փրկելու համար: Ըստ քրիստոնեական պատկերացումների , Քրիստոսը կրկին գալու է երկիր և մեղավորներին ահեղ դատաստան է սպասվում: Ահա այս գաղափարները շատ էական են կյանքի կոնկրետ խնդիրների , այդ թվում նաև մանկավարժական խնդիրների լուծման համար:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. սահմանել Աստվածաշնչյան առակների դերն ու նշանակությունը սովորողների կյանքում:

3. առանձնացնել այն Աստվածաշնչյան առակները, որոնք սովորողները լավագույնս կյուրացնեն ՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Քրիստոնեական գաղափարախոսությունները դեռևս բազմաթիվ դարեր առաջ ձևակերպել են խոսքի ու գործի, սոցիալական դիրքորոշման և վարքի փոխհարաբերության հոգեբանական և մանկավարժական խնդիրներ, որը հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ միայն 20-րդ դարում[1]:

Քրիստոնեական հավատալիքների համաձայն՝ մարդը ստեղծվել է Աստծո պատկերով: Նա սկզբում կատարյալ էր, սակայն հետո մեղանչեց և անկատար դարձավ: Անկատար մարդը ունի կոշտ, տեսանելի մարմին, գայթակղվող հոգի, որի հայացքն ուղղված է դեպի Աստված: Դրանից բացի քրիստոնեությունը չի առանձնացնում մարդու մարմինն ու հոգին և նշում է, որ փրկության ենթակա են ոչ միայն մարմինը, այլև հոգին: Կատարյալ մարդ, ով կապված էր Աստվածային բնությանը, համարվում է Հիսուս Քրիստոսը:

Աստվածաշնչյան առակները ոչ միայն ունեն դաստիարակչական մեծ նշանակություն , այլև քննադատական, խրատական, հաճախ երգիծական բնույթ: Հիսուսի առակները պարզ էին և մատչելի բոլորի համար, առակը պատմելուց հետո նա նաև սկսում էր մեկնաբանել , որպեսզի էլ ավելի հասանելի դարձնի առակի բովանդակությունը:

Աստվածաշնչյան առակների ուսուցումը հարկավոր է իրականացնել առաջին դասարանից և քայլ առ քայլ հասցնել նրան, որ երեխան ինքնակամ, տանը բացի և ընթերցի իր ընտրությամբ ցանկացած առակ, կամ էլ վերհիշելու նպատակով կրկին ընթերցի առակը: Աստվածաշնչում նշվում է, որ Հիսուսը առակների միջոցով սովորեցնում էր մարդկանց[2] : Այդպիսով նա անուղղակիորեն խրատում էր իրեն լսող ու հետևող ժողովրդին:

Շատ մանկավարժներ կարծում են, որ կրտսեր դպրոցում պետք է սովորեցնել գեղարվեստական տեքստի դանդաղ ընթերցանություն, որպեսզի երեխան կարդալու ընթացքում կարողանա մտածել յուրաքանչյուր բառի իմաստի շուրջ , բացի այդ կարողանա հարցեր տալ և գտնել դրանց պատասխանները, կարողանա կարդացածի տարրական վերլուծություն կատարել: Պետք է ընդունել, որ երեխային մենք կարդալ ենք սովորեցնում ոչ թե մեզ համար, այլ իր[3] :

---

[1]Նալչաջյան Ա. Ա. , Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2003, էջ 45,
[2]Մանուկների Աստվածաշունչ,, Ավետարան ըստ Մաթևոսի 13 :24-50, էջ 346,
[3] Գյուլամիրյան Ձ. , Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 63,

Իսկ ահա Աստվածաշնչյան առակներին ծանոթացնելը պետք է սկսել տարրական դասարաններում, այդպիսով սեր արթնացնելով նաև դեպի Աստվածաշունչը և մեր կրոնը: Նոր սերնդին ևս պետք է ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով:

Այդ առակները դարեր շարունակ պահպանել են և դեռ կպահպանեն ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը: Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունն անգնահատելի են: Տարրական դասարաններում առակների դասավանդումը երբեք չի կորցնում իր նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ ամրապնդել բնավորության լավ գծերն ու վերացնել վատերը, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները: Առակների ուսուցումը նպաստում է նաև աշակերտների ընթերցասիրությանը, զարգացնում կարդալու որակական հատկանիշները: Դասագրքերում ընդգրկված աստվածաշնչյան առակները փոքրիկ ընթերցողների համար միշտ էլ սիրելի են ու հետաքրքիր :

Եթե քրիստոնեական մանկավարժության մեջ ընդունվում է , որ ներողամտությունը որոշ դրական ազդեցություն է գործում մարդու հոգեկան զարգացման վրա, ապա միաժամանակ հստակորեն գիտակցվում է, որ անպիտան մարդուն վերադաստիարակելը գործնականում անհնարին է: Դեռևս Սողոմոն Իմաստունն է հասկացել, քննելով մարդկային մոլորությունները, որ խեղաթյուրվածին հնարավոր չէ ուղղել, միակ հույսը երեխաներին կրթելն է: «Պատանուն կրթիր նրա ուղու սկզբում, նա դրանից չի շեղվի մինչև անգամ, երբ մեծանա»(Առակ. , ԻԲ,6): Այս միտքը ճիշտ է համարել նաև Յան Ամոս Կոմենսկին[1]:

Իսկ մեծերն էլ, եթե ցանկանում են հայտնվել երկնային թագավորությունում , պետք է դարձի գան և դառնան երեխաների պես անպիղծ: Երեխաները պարզսիրտ են, անկեղծ, կամեցող և խոնարհ, չունեն կանխակալ մտքեր: «Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիններինն է» (Մատթ. 19:14): Երեխաները համարվում են առավելապես աստվածայինի կրողը: Ինչպես ասում են՝ երեխաները երկնքի արքայության ժառանգակիցներն են: Քրիստոսը մեծահասակներից պահանջում էր լինել երեխաների պես, ձեռք քաշել չարից, լինել արդարամիտ, պարզ, հեզ, հնազանդ, խոնարհ և մաքուր:

[1] Կոմենսկի Յ. Ա. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962, էջ 61,

ԳԼՈՒԽ 1

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱԿ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ

Քրիստոնեությունը միաստվածային կրոն է , հուդայականության և իսլամի հետ մտնում է աբրահամական կրոնների խմբի մեջ, իսլամի և բուդդիզմի հետ մեկտեղ մտնում է երեք համաշխարհային կրոնների թվի մեջ:

Քրիստոնեություն եզրույթն առաջին անգամ օգտագործվել է Իգնատիոս Անտիոքացու կողմից (մահ. 113/117) Մագնեզիայի, Հռոմի և Ֆիլադելֆիայի եկեղեցիներին հղած նամակներում:

Քրիստոնեության կարևորագույն հրամանակարգն է՝ մեղքից, մահից և անեծքից մարդուն ազատելու նպատակով իրապես մարմնացած և մարդացած Աստվածամարդու, Նախահավիտենական Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին վարդապետությունը:

Ժամանակի ընթացքում, պատմական հանգամանքների և աստվածաբանական մտքի զարգացման թելադրանքով, քրիստոնեական եկեղեցին ձյուղավորվել, երկփեղկվել է արևելաքրիստոնեական և արևմտաքրիստոնեական ուղղությունների (որոնցից են Ուղղափառությունը, Կաթոլիկությունը), իսկ 16-րդ դարում՝ Ռեֆորմացիայի արդյունքում, ձևավորվել է քրիստոնեության երրորդ մեծ ուղղությունը՝ բողոքականությունը:

Քրիստոնեության սրբազան գիրքը Աստվածաշունչն է. քրիստոնյաների պատկերմամբ՝ Աստծո խոսքը՝ ուղղված իր իսկ արարած աշխարհին: Հայտնությամբ տրված քրիստոնեական դավանանքի հիմնական դրույթները համառոտ և ամփոփ բանաձևված են Հավատո հանգանակներում:

Քրիստոնեությունը պահանջում է ոչ միայն զսպվածություն. այն մարդուց պահանջում է ճնշել սեփական բնազդները՝ հայտարարելով, թե մարդկային մարմինը մեղավոր է և արհամարհանքի է արժանի: Ավելին՝ ստեղծվել են հատուկ վարժություններ , որոնց նպատակը մարմինը տառապանքների ենթարկելն է, մարմնային հակումները սպանելը: Սա արդեն քրիստոնեական մանկավարժության կոնկրետ դրսևորումներից մեկն է:

Քրիստոնեական ժողովուրդների մանկավարժության մեջ, նույնիսկ ընտանեկան սոցիալականացման գործընթացներում , դժվար չէ նկատել այս պահանջների դրսևորումները: Առավել ևս դա հստակորեն է դիտվել դպրոցներում , որոնք դարեր շարունակ գտնվել են եկեղեցու ձեռքին:

Եթե համախմբենք խոսքը, գործը և քրիստոնեական գաղափարները , ապա կարող ենք պատասխանել այն հարցին, թե ինչու ստեղծվեցին առակները: Սրա բացատրությունը հետևյալն է՝ մարդ արարածը սիրում է սովորել օրինակներով: Ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է ,քան վերացական խրատը: Առակն ունի դաստիարակչական նպատակ , այն օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև օրս սիրված են և շարունակում են մնալ որպես գրական տեսակ:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա մեծ ազդեցություն են թողել: Առակը հնագույն գրական տեսակ է , և ինչպես վկայում է ժամանակը, ու ինչպես հաստատում են տարբեր ազգերի գրականությունների պատմությունները, այն այսօր էլ կա որպես ժանր՝ պահպանող անցյալի գրական արժեքների հարուստ գանձարանը: Առակը այլաբանական գրականության մի տեսակն է, այն փոքրածավալ պատմվածք է, որում մարդկանցից բացի կարող են հանդես գալ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ, որոնց փոխհարաբերությունները խորհրդանշում են մարդկային հարաբերություններ: Առակները երգիծական և քննադատական բնույթ ունեն: Նրանցում այլաբանորեն մերժված են մարդկային հասարակության մեջ տեղ գտած արատավոր գծերը՝ ագահությունը , ժլատությունը, ծուլությունը , մեծամտությունը, դավաճանությունը, ապերախտությունը, ստախոսությունը, չարությունը, նախանձը, տգիտությունը և այլն: Առակները մեծ մասամբ ունենում են բարոյախոսական վերջաբան, որը մեկնում է առակի իմաստը: Առակներն ունեն դաստիարակչական և ճանաչողական մեծ արժեք:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությանն անդրադառնալիս, բավական է հիշել , թե Հիսուսը Ավետարանում որքան է խոսել առակներով: Ուրեմն առակն ուներ կենսական նշանակություն: Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ:

Կարելի է վստահորեն ասել, որ դաստիարակության նպատակը բարոյական բարձր զարգացման տեր , հոգեպես հասուն և առողջ մարդու ձևավորումն է:

Քրիստոսը շատ լավ իմացել է ուրիշի վիճակի մեջ մտնելու , իրադրությանը ուրիշի աչքերով նայելու երևույթը, որն այժմ սոցիալական հոգեբանները դերի ընդունման հիման վրա առաջացող էմպաթիա են անվանում: Էմպաթիան, կամ հուզական ապրումակցումը, հնարավոր է դառնում, եթե կարողանում եք երևակայությամբ ընդունել ուրիշի դերը, հասկանալ նրա ապրումներն ու տոգորվել դրանցով[1]:

Այստեղից էլ քրիստոնեական դաստիարակության ոսկե օրերնքը. «Այն ամենը, ինչ որ կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց, որովհետև այդ իսկ են օրենքն ու մարգարեները»: Իսկ Աստվածաշնչում ասվում է. «Երուսաղեմում Իսրայելի թագավոր Սողոմանի՝ Դավթի որդու առակները՝ ճանաչելու իմաստությունն ու խրատը, հասկանալու խոսքերը հանճարեղ, ընկալելու խոսքի դարձվածքները, ուսանելու ճշմարիտ արդարությունը և ուղղվելու դեպի իրավունքը, անուսումներին տալու խորագիտություն, երիտասարդներին՝ գիտելիք և կողմնորոշում: Քանզի դրանք լսելով՝ իմաստունն ավելի կիմաստանա, կրթյալը կստանա կյանքի ուղեցույց: Սրանով մարդ կհասկանա իմաստունների խոսքերը՝ նրանց իմաստուն խոսքերը, նրանց առակները, նրանց այլաբանություններն ու հանելուկները»[2]: Քրիստոսի ուսումունքի մեջ արծարծվում են մարդկային հանրույթների գոյության հավերժական հարցեր: Անդրադառնանք «Բարի սամարացին » առակին, որը նաև ընդգրկված է չորրորդ դասարանի Մայրենիի դասագրքում «Ամենալավ ընկերը» խորագրով:

Երբ Հիսուսի ունկնդիրներից մեկը նրան հարցնում է. թե ինչ պետք է անի ինքը՝ հավերժական կյանք ժառանգելու համար, Հիսուսը նրան հիշեցնում Սուրբ գրքի օրենքը. «Պետք է սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը»:

Իսկ ունկնդրի այն հարցին, թե «Ո՞վ է իմ ընկերը», Հիսուսը պատասխանում է «Բարի սամարացին» առակով: Առակի հերոսը անկախ իր կրոնական պատկանելիությունից, անկախ իր աշխարհայացքից, անկախ իր գաղափարներից դիմացինին օգնության ձեռք է մեկնում միայն այն պատճառով , որ այդ դիմացինը տիրոջ պատկերն ու նմանությունն ունի: Հիսուսը հորդորում է վարվել բարի սամարացու նման, գթալ և օգնել նրան, ով ունի օգնության կարիք: Այս առակում պատկերավոր ձևով ներկայացված են օգնության և գթասրտության հոգեբանության հիմնական հարցեր: Հետաքրքրական է, որ Քրիստոսն առիթը բաց չի թողնում ՝ ընդգծելու համար հուդայական քահանաների անհոգի, մարդկանց տառապանքների նկատմամբ անտարբեր լինելը. քահանան անցնում է նույն ճանապարհով, տեսնում է տառապող մարդուն, բայց անցնում գնում է:

---

[1] Նալչաջյան Ա. Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997, էջ 125,

[2] Աստվածաշունչ մատյան,Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին , Հայաստանի Աստվածաշրնյան ընկերություն, 2017,էջ 667,

[3] Ղուկաս, Գլ. Ժ, 25-28, էջ 193:

Աշխատասիրության փառաբանումն ու ծուլության քննադատությունը շատ լավ է ներկայացված «Քանքարների առակ»-ի մեջ հղում Մատթեոս, ԻԵ, 14-30, որը թեև պարտադիր ընթերցանության ցանկում և դասագրքերում ըդգրկված չէ, սակայն արտադասարանական ընթերցանության լավագույն նյութերից է և ունի դաստիարակչական մեծ արժեք:

Տերն իր երեք ծառաներին համապատասխանաբար 5, 2 և 1 քանքար դրամ է տալիս և գնում այլ երկիր: Առաջին երկուսը ստացած գումարը գործի մեջ են դնում, շահույթ են ստանում և այդպես աճեցրած՝ վերադարձնում են իրենց տիրոջը: Իսկ ծույլը ստացած դրամը թաքցնում է հողի տակ և երբ տերը վերադառնում է՝ նույնությամբ վերադարձնում է նրան: Տերը նրան «չար ու ծույլ » է անվանում և կարգադրում է նրանից վերցնել այդ մեկ քանքարն ու տալ նրան, ով տասն ունի՝ «քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի , նրանից ունեցածն էլ պիտի վերցվի: Իսկ այդ անպիտան ծառային հրամայում է դուրս հանել, այնտեղ կլինի լաց և ատամների կռճտում»[1] : Նա ով աշխատասեր է՝ թող հարստանա:

Քրիստոսի ազդեցիկության լծակներից մեկն էլ նրա ներողամտությունն էր, մարդկանց մեղքերին թողություն տալու ընդունակությունը: Այն մարդիկ, ովքեր նրան մարգարե և վարդապետ էին կոչում, լսում էին նրան, մեղքերի թողություն ստանում և, ինչպես Քրիստոսն էր ենթադրում, սկսում էին սիրել իրեն:

Սակայն փարիսեցիներն ու Հիսուսի մյուս հակառակորդները համոզված էին, որ մարդկանց մեղքերի թողություն կարող է տալ միայն Աստված. «Ո՞վ է սա, որ մեղքերին թողություն է տալիս»,- մտածում էին նրանք՝ որոշելով կործանել նրան:

Բայց հոգեբանի և մանկավարժի տեսակետից այստեղ կարևորը ներողամտության դաստիարակչական նշանակությունն է: Ընդ որում, Հիսուսը համոզված էր, որ ինչքան ավելի մեծ մեղք ների, այնքան ավելի մեծ կլինի ներվածի սերը: Իր այս տեսակետը նա բացատրում է որոշ չափով այլաբանորեն, առակի օգնությամբ՝ դիմելով Սիմոն անունով մի փարիսեցու. «Մի փոխատու երկու պարտապաններ ուներ . մեկը հինգ հարյուր դահեկան պարտք ուներ , իսկ մյուսը՝ հիսուն: Եվ քանի որ նրանք հատուցելու ոչինչ չունեին , երկուսին էլ պարտքը շնորհեց, հիմա ասա, ո՞վ ավելի շատ կսիրի նրան»:

[1]Մատթեոս, Իժ, 28-30

Եվ Սիմոնը պատասխանում է. «Ինձ այնպես է թվում, թե նա՝ ում ավելի շատը շնորհվեց»: Այս պատասխանը Հիսուսը ճիշտ է համարում[1]:

Իհարկե, այստեղ կա լուրջ հոգեբանական խնդիր: Կյանքում լինում են նաև դեպքեր, երբ ներում ես մեկի մեծ մեղքերը, բայց նա ոչ միայն չի սիրում իր բարերարին, այլև սկսում է ատել նրան ու փորձում է վնասել: Նրա՝ ներվածի վարքը կախված է այն բանից, թե ինչպես է գնահատում ներողին, ներումն ու այդ բարի գործողության դրդապատճառները: Բացի այդ , ներվածն իրեն կարող է նսեմացած զգալ՝ ներողի հետ իրեն համեմատելու հետևանքով:

Խնդիրն , այսպիսով, ավելի բարդ է: Բայց մի բան ակնհայտ է. ներողամտությունը բավականին հաճախ հանգեցնում է դրական արդյունքների. ներվածը կատարելագործվում և սկսում է առաջվանից ավելի շատ սիրել ոչ միայն բարերարին, այլև մարդկանց ընդհանրապես: Օրինակ՝ Մարիամ Մագդաղենացուն ներելն, անկասկած, դրական արդյունքների հանգեցրեց: Նրանից, ըստ Աստվածաշնչի , Քրիստոսի օգնությամբ յոթ դև էր դուրս եկել:

Ինչպե՞ս է Աստված հոգ տանում պատանեկության մասին: Նրանց մոտ է ուղարկում պահապան հրեշտակներին, իսկ դաստիարակ-ծնողներին պատվիրում է երեխաներին դաստիարակել իր ուսմունքի ՝ քրիստոնեության և իր խրատների ոգով: Երեխաները լույս աշխարհ են գալիս մաքուր, պարզ, խոնարհ և նրանց քրիստոնեական, բարոյական կերպարի հետագա ձևավորումը սերտորեն շաղկապված է ծնողների բարոյական ընկալումների հետ: «Խրատի՛ր որդուդ , որպեսզի այդպես բարի հույս լինի քեզ համար…» (Առակ 19:18):

Աստված բոլոր մարդկանց խստորեն պատվիրում է՝ վատ օրինակներով չգայթակղեցնել երեխաներին և պատանիներին, չանբարոյականացնել նրանց: Իսկ նրանց, ով հակառակ ձևով է վարվում, խոստանում է հավիտենական տառապանքներ[2]:

[1] Ղուկաս է , 41-44, էջ 179

[2] Մատթեոս, ԺԸ, 67

ԳԼՈՒԽ 2

ԱՌԱԿԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրում մեծ տեղ է հատկացված առակի ժանրին, առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ: Հարկ է նշել, որ մայրենիի ընթերցարաններում շատ ավելի առակներ ընդգրկելը միայն դրական ազդեցություն կթողնի:

Երեխան դեռևս տարրական դպրոցից սկսում է բացահայտել բարին, գեղեցիկը, արդարը, և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում:

Աստվածաշնչյան առակներն ու օրինակները շատ առումներով օգտակար են, դրանք սովորողների մեջ հետաքրքրություն են առաջացնում՝ մղելով նրանց լսելու, խորհելու, հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար: Առակներով սովորեցնելը հեշտ է, որովհետև սովորաբար տպավորիչ օրինակը կամ առակը չի մոռացվում, դրանք մտքում վառ պատկերներ են ստեղծում, որոնց շնորհիվ հեշտ է լինում հասկանալ: Երեխաները սիրում են սովորել օրինակով, ընդօրինակելը նրանց համար շատ ավելի հեշտ է, քան վերացական խրատը:

Աստվածաշնչյան առակները կազմում են հատուկ հոգևոր շրջանակ, որը սովորողները հետագայում հարստացնում են իրենց կենսափորձով: Այդ առակները բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր են և մեծապես նպաստում են հոգևոր, բարոյական որակների ձեռքբերմանը: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են, որոնք նկարագրում են հավերժական ճշմարտություններ, որոնց վրա ժամանակը ուժ չունի: Առակների շնորհիվ սովորողներն ի վիճակի են լինում ընկալել պարզ ու հասարակ ճշմարտություններ, առակների ուսուցումը նպաստում է երեխաների հոգում հաստատել բարեպաշտությամբ և արդարությամբ ապրելու կամք: Այդ կարճ և ուսանելի պատմությունները երեխաներին ստիպում են մտածել, տեսնել աշխարհի գեղեցկությունը, սովորեցնում են բարություն և հանդուրժողականություն, մշակում անձնազոհություն: Երեխաները սիրով են սովորում առակները, յուրացնում նրանց բարոյախրատական դասերը, փորձում են գտնել նմանօրինակ երևույթներ իրենց շրջապատող միջավայրում:

Աստվածաշնչյան առակներն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, այն բարոյական արժեքները, որոնք քարոզվում են այս առակներում, հավերժական են: Արդիական գիտելիքի ուսուցմանը հավասարազոր կարևոր է նաև հոգևոր նկարագրի ու ներաշխարհի ձևավորումը: Դրանք ձևավորում են բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող ապագա քաղաքացիներ :

Հատկապես սովորողները շատ են ոգևորվում, երբ առակը կատարում են դերերով և իրենց երևակայության մեջ նույնանում են տվյալ հերոսի հետ, դառնում ընթացող իրադարձությունների մասնակիցը: Երեխաների մեջ ամենակարևոր և անփոխարինելի սկզբունքը կրկնօրինակելու ունակությունն է: Երեխաների համար Աստվածաշնչյան առակների հերոսները վառ կերպարներ են, որոնց պատմությունները երեխաների համար դառնում են ընդօրինակման աղբյուր և հիմք՝ հասկանալու Աստծո էությունը և մարդկանց հետ Նրա հարաբերությունները: Նրանք բոլորը, յուրաքանչյուրն յուրովի, ապավինում են Աստծուն և ձգտում կատարել նրա կամքը:

Եվ քանի որ երեխաների հուզական աշխարհը շատ անաղարտ է, նրանք մնում են անհաշտ առակում քննադատվող այս կամ այն կերպարի հետ:

Աստվածաշնչյան առակներն ունեն այնքան իմաստուն մտքեր, որոնք հարկավոր է յուրաքանչյուր սովորող իմանա, որպես կյանքի հետագա ճանապարհի ճիշտ ուղի:

Առակներն ուսուցանելիս ուսուցիչը պետք է հնարավորինս մատչելի կերպով մատուցի նյութը, որպեսզի սովորողները դրանց իմաստն ընկալեն այնպիսին , ինչպիսին այն իրականում կա: Առակներն իրենց բնույթով բազմազան են և ունեն խորը իմաստներ, որոնք հարկավոր է ճիշտ մատուցել սովորողին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մանրուք: Ուսուցիչն, անդրադառնալով Հիսուսի առակներին, հնարավորություն է ստանում դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորել նոր արժեքներ:

Հիսուսն առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ տալով բարության, լույսի, հույսի, հավատի, սիրո, մարդասիրության դասեր:

Ընդհանրապես առակի ուսուցման ժամանակ կարելի է կիրառել բազմանիստ մեթոդը: Այս մեթոդը ապահովում է սովորողների ակտիվությունը:

Բազմանիստը հաջողությամբ կառուցելու դեպքում դասի հաջող և հետաքրքրական սկիզբը երաշխավորված կլինի:



Ելնելով ուսուցմանն առաջադրված նոր պահանջներից՝ շատ առակներ պետք է ներկայացվեն նորովի, նոր ժամանակներին համապատասխան:

Այժմ անդրադառնանք 4-րդ դասարանի դասագրքում տեղ գտած աստվածաշնչյան առակին: Այս առակը իրական ընկեր, ճշմարիտ քրիստոնյա լինելու ճանապարհին մեզ համար լավագույն օրինակ է:

Թեման՝ Լավ ընկերը 1 (ըստ Աստվածաշնչի)
Ժամաքանակը՝ 2 դասաժամ
Նպատակը կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները՝
ա) Գիտելիքներ
Աշակերտը պետք է իմանա՝

- Ապառաժ , արյունաքամ, ոչ ոք, իբր բառերի ուղղագրությունը.
- Նոր բառեր և իմաստներ (ապառաժ, դարանակալել, քսակ,անմարդաբնակ, ամայի).
- Կայուն բառակապակցություններ (ճանապարհ ընկնել, օգնության ձեռք մեկնել, հայացք գցել).
- Հսկայական, շքեղ, ոլորապտույտ, անմարդաբնակ բառերի հոմանիշները.
- Հսկայական վտանգավոր բառերի հականիշները
- Ոտնաձայն բառի կազմությունը և ձայն արմատով այլ բառեր.
- Գոյականակերտ –ացք ածանցը և նրանով կազմված բառեր.
- Բարեկամության կամ ընկերության մասին առածներ.
- Հիսուսի մեկ ուրիշ պատմություն:

բ) Կարողություններ և հմտություններ
Աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը.

- Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը.
- Նկարագրել և բնութագրել գործող անձանց.
- Ներկայացնել իր հնարավոր գործողությունները համանման իրավիճակում
- Տրամաբանված ինքնուրույն խոսք կառուցել («Քարսիրտ մարդու վերջը» վերնագրով շարադրություն գրել).
- Գործնականում կիրառել բառակազմական հմտություններ:

գ) Արժեքային համակարգ

Աշակերտը պետք է՝

- Գնահատի գործող անձանց բնորոշ հատկանիշները (անտարբերություն, եսասիրություն, անազնվություն) և վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ
- Կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը, ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ:

Դասի ընթացքը

1-ին դասաժամ

«Լավ ընկերը 1». ընթերցանություն, բառային աշխատանք (հոմանիշներ, դարձվածքներ)

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում ընկեր բառի առաջացրած զուգորդումները: Պաստառի վրա պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկեր:



Իմաստի ընկալման փուլ

Պատմության ընթերցում՝ կանխագուշակության աղյուսակի կիրառմամբ (4 մասով):

Բնագրային աշխատանք՝

- Բառային աշխատանք (կատարել յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո)

- 1-ին հատված (ավարտվում է Մարդը միայնակ էր ճամփորդում և քսակում բավականին շատ փող ուներ նախադասությամբ).
- Հանձնարարել Բառերի գանձատուփի 4-րդ և 5-րդ առաջադրանքները ապառաժ, դարանակալել և քսակ բառերի իմաստները պարզելու համար.
- Ոլորապտույտ, ամայի բառերի իմաստը պարզելու համար հանձնարարել Բառերի գանձատուփի 1-ին առաջադրանքը.

2-րդ հատված (ավարտվում է Նա նայեց ժանապարհին ընկած վիրավորին ու նկատեց արյունը նախադասությամբ)

- Բացատրել արյունաքամ բառի իմաստը.
- Ամրապնդել անմարդաբնակ բառի իմաստն ու հոմանշությունը.

3-րդ հատված (ավարտվում է Անցորդը շտապում էր նախադասությամբ).

- Ամրապնդել շքեղ բառի իմաստն ու հոմանշությունը

4-րդ հատված (վերջինն է)

- Հանձնարարել բառերի գանձատուփ 3-րդ առաջադրանքը օգնության ձեռք մեկնել, հայացք գցել կայուն կապակցությունների իմաստները սովորեցնելու համար:

Բնագրի ընթերցում ամբողջությամբ.

Տեքստային աշխատանք

- Ճանապարհի նկարագրություն և նշված ու հնարավոր վտանգների թվարկում
- Գործող անձանց բնորոշող հատկանիշների բացահայտում

Կշռադատման փուլ

Սովորողները պետք է՝

- լրացնեն քառաբաժանի աղյուսակը

Ի՞նչ ձայներ էի լսում	Ի՞նչ էի տեսնում
Ի՞նչ էի զգում	Իմ կարծիքով…

Հանձնարարում ենք Մանուկների Աստվածաշնչից Հիսուսի մեկ այլ պատմության ընթերցում և բովանդակության վերարտադրում :

Արտադասարանական ընթերցանության հիմնական խնդիրները որոշվում են 2-րդ և 3-րդ դասարաններում: Երկրորդ դասարանում աստիճանաբար բարդանում են ընթերցանության խնդիրները: Երեխաներին հանձնարարում ենք ընթերցել աստվածաշնչյան առակը, նկարել այն և կազմել թեմատիկ ցուցահանդես, իսկ

ցուցադրելու են Մանուկների աստվածաշունչը: Նրանք կարող են դիմել ընտանիքի անդամների օգնությանը, նրանց հետ միասին պատրաստել պաստառ, ցուցահանդեսին անհրաժեշտ ամեն ինչ:

Մանուկների Աստվածաշնչից մենք հանձնարարել ենք ընթերցել.

○ Առակ անմիտ հարուստի մասին (այս առակը սովորեցնում է, որ մարդու կյանքը նրա բարեկեցությունը կամ երջանկությունը կախված չեն նրա ունեցվածքի շատությունից: Երկրավոր գանձեր կուտակելու փոխարեն, մեզ անհրաժեշտ է հոգալ առաքինությունների ձեռք բերման մասին):

○ Առակ կորած ոչխարի մասին («Նմանապես իմ Հայրը, որ երկնքում է, չի ուզում, որ այս փոքրիկներից մեկը կորչի[1]»:)

Այսպիսով մենք լուծել ենք մի շարք խնդիրներ. նախ , կարծում ենք, որ Աստվածաշնչի հետ հայ երեխայի կապը պետք է ավելի սերտ լինի, և եթե երեխան առաջին դասարանի աշակերտ է, ապա այս հարցում մեզ կօգնեն նաև ծնողները, չմոռանանք, որ ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում աստիճանաբար՝ փուլ առ փուլ.

1-ին փուլ (նախապատրաստական)՝ 1-ին դասարանի առաջին կիսամյակ, երբ աշակերտները դեռևս նոր են գրաճանաչ դառնում.

2-րդ փուլ (տարրական կամ նախնական)՝ 1-ին դասարանի 2-րդ կիսամյակ

3-րդ փուլ (հիմնական)՝ 2-րդ և 3-րդ դասարաններ:

Երեք փուլերի համար էլ կարևոր խնդիրներ են երեխաների ընթերցողական մտահորիզոնի ընդլայնումը և յուրաքանչյուր երեխայի ընթերցողական փորձի կատարելագործումը:

Նախապատրաստական փուլում անհրաժեշտ է 1-ին դասարանցիների մեջ արթնացնել գրքի նկատմամբ հետաքրքրությունը, ամեն օր , յուրաքանչյուր ազատ ժամ գրքով զբաղվելու ձգտում: Ձեռք են բերվում գրքից օգտվելու գործնական գիտելիքներ և կարողություններ:

Այս փուլում աշխատանքը կազմակերպել ենք հետևյալ կերպ, պարբերաբար՝ շաբաթական մեկ անգամ, երեխաներն ունկնդրում են ծավալով ոչ մեծ առակներ, որոնք ընթերցում է ուսուցիչը: Երեխաները ունկնդրում են առակում տեղի ունեցած դեպքերը, առանձնացնում էական մանրամասները, ծանոթանում գործող անձանց, հիշում ոչ միայն նրանց անունները, այլև վարքը, գործողությունները:

[1] Մտ 18.12-14, (Ղկ 15.3-7)

Բոլոր առակներն էլ ընտրվում են Մանուկների Աստվածաշնչից: Առակն ավարտելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է երեխաներին և թույլ տալիս, որ նրանք բռնեն գիրքը, թերթեն, դիտեն կազմը, նկարազարդումները: Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է կազմի վրա, ցույց տալիս և կարդում գրքի վերնագիրը: Առակի անվանումը և Հիսուսի անունը կրկնել է տալիս երեխաներին: Ներկայացնում է առակին առնչվող նկարազարդումը , մղում նրանց առակի գաղափարը հասկանալու, դեպքերի և հերոսների մասին պարզ դատողություններ անելու և այլն: Այնուհետև հանձնարարում է մտապահել առակի բովանդակությունը, գործողությունների հաջորդականությունը և այլն: Մատիտներով գունավորման համար նախատեսված գրքույկները ևս հետաքրքրություն են առաջ բերում երեխայի մոտ:

Առաջին դասարանի 2-րդ կիսամյակում սկսվում է ինքնուրույն ընթերցանության նախնական փուլը: Այս փուլում արտադասարանական ընթերցանության պարապմունքի ժամանակ աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարդալ Աստվածաշունչը, գտնել առակը, դիտել նկարազարդումը: Հարկ է սովորեցնել ընթերցելիս չշեղվել, հիշել կարդացածի բովանդակությունն ու վերնագիրը, պատմելիս ցուցադրել ընտանիքի հետ պատրաստած նկարազարդումը: Զուգահեռաբար աշակերտները պետք է սովորեն գրառել կարդացած գրքի վերնագիրը: Այդ նպատակով ուսուցիչը երեխաներին խորհուրդ է տալիս առանձնացնել հատուկ տեղերը և գրի առնել կարդացած առակի վերնագիրը, գործող անձանց, ավարտը:

Այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար հարկավոր է հաշվի առնել 1-ին դասարանցիների՝ որպես ինքնուրույն ընթերցողների տարիքային , մտավոր, հոգեբանական առանձնահատկությունները:

Երեխաների աշխատանքը հարկավոր է կազմակերպել մանկավարժորեն և մեթոդապես ճիշտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աստվածաշնչյան առակները մատչելի են դպրոցահասակ երեխաների համար:
2. Առակների ուսուցումը արդյունավետ է, եթե սկսել դրանք ուսուցանել առաջին դասարանից:
3. Աստվածաշնչյան առակներով մենք դաստիարակում ենք բարոյական բարձր զարգացման տեր , հոգեպես հասուն և առողջ մարդ:
4. Տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրում մեծ տեղ է հատկացված առակի ժանրին:
5. Երեխաները սիրով են սովորում առակները, յուրացնում նրանց բարոյա-խրատական դասերը, փորձում են գտնել նմանօրինակ երևույթներ իրենց շրջապատող միջավայրում:
6. Երեխաները շատ են ոգևորվում, երբ առակը կատարում են դերերով և իրենց երևակայության մեջ նույնանում են տվյալ հերոսի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գյուլամիրյան Ջ. , Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015,

Կոմենսկի Յ. Ա. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962,

Մանուկների Աստվածաշունչ, Ավետարան ըստ Մաթևոսի 13:24-50,

Նալչաջյան Ա. Ա. , Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2003,

Նալչաջյան Ա. Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան,

Աստվածաշունչ մատյան, Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին , Հայաստանի Աստվածաշնչյան ընկերություն, 2017: